

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝ \_\_\_\_\_ /Ֆ. ԱՄՈՅԱՆԸ/

Հաստատվել է համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 15-ի N 3 –Ն որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարիող ջույնի խոսքը.....	3
2. Համայնքի հրավիճակին կարագրություն.....	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2 Համայնքի սոցիալտնտեսական հրավիճակը.....	4
2.3 Համայնքում հրականացվող ծրագրերը.....	6
2.4 Համայնքի ֆինանսական հրավիճակին կարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	6
2.5 Համայնքի ուժեղ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	7
3. Նպատակների սահմանում կործողությունների պլանավորում.....	10
3.1 Համայնքի զարգացման տեսլական.....	10
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	14
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	16
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ) .....	17
Հավելված 1-Ծրագրերի անձնագրեր.....	18

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Արևուտ համայնքի 2017-2021թթ. Հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայություններ սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ): Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է չորս բաժիններից՝

1. *Համայնքի իրավիճակի նկարագրում.*
2. *Նպատակների Սահմանում և գործողությունների պլանավորում.*
3. *Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր Ֆինանսավորում.*
4. *Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ.*

Ծրագրի նախագիծը հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի ծրագիրը կապված համայնքի բնակիչների կենսական պայմանների բարելավման, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արևուտ գյուղը հիմնադրվել է 1918 թվականին: Գյուղի բնակիչները հիմնականում Եզդիներ են:

Գյուղը գտնվում է Արթին լեռան ստորոտում, ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: Հյուսիսից սահմանակից է ք. Թալինին Հյուսիս Արևելքից գ. Թաթուլին: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են երաշտ տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական և անասնապահության աշխատանքները:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4378 հա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 81 կմ, մարզկենտրոնից՝ 36 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 6 կմ:

Համայնքի տարածքում կան ավազային պեմզայի և օպսիդային քարի հանքավայրեր:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 110 մարդ, այդ թվում տղամարդիկ 38` և կանայք` 72: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է`

- 0-6 տարեկան -12 մարդ
- 7-17 տարեկան – 22 մարդ
- 18-63 տարեկան –50 մարդ
- 64 և ավելի տարեկան – 26 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 32
- Այդ թվում
- հաշմանդամներ - 0 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 3
- աշխատունակներ – 50 մարդ
- զբաղվածներ – 15 մարդ
- գործազուրկներ – 35 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 32
- ընտանիքների թիվը - 40
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 0, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 0:

## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի 2016թ. փաստացի մուտքերի ուղղությունների տեսակարար կշիռներն ընդհանուր մուտքերի մեջ սեփական մուտքերը (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) կազմում են ընդամենը **16 %**, իսկ պաշտոնական դրամաշնորհների (պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմում է 84%: Սա նշանակում է, որ համայնքի բյուջեի մուտքերի մեծամասնությունը ստացվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ուղղությամբ, այսինքն համայնքի ֆինանսական անկախության (ինքնուրույնության) աստիճանն ցածր է և համայնքը մեծ կախվածության մեջ է գտնվում ՀՀ պետական բյուջեից:

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է **490** այդ թվում կով` 220, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը` 700, այդ թվում ոչխար` 600, այծ` **0**: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես` հավեր` հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Համայնքում գործում է ութամյա դպրոց, որը նախատեսված է մինչև 100 աշակերտի համար, ներկայումս սովորում են 18 աշակերտ: Դպրոցում աշխատում են 8 մարդ, որոնցից 6-ը մանկավարժներ են: Դպրոցի շենքը կառուցվել է 1988թ. Մարզադահլիճով, պետական միջոցների հաշվին: Դասավանդումը կատարվում է հայերեն և եզդերեն լեզուներով:

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման առաջիկա հինգ տարիների համար սահմանված ծրագրերի ցանկը և ֆինանսավորման չափը այսպիսին է.

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարելավում	250.0
2.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	3500,0
3.	Համայնքի գազաֆիկացում	18000.0
4.	Գյուղ տանող ճանապարհի ասֆալտապատում 3.5 կմ	30000.0
5	Նոր սպանդանոցի կառուցում	15000.0

2.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Աղյուսակ 1

Հ/հ	Մուտքերի անվանումը	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	4	5	6	7	8	9	9
	<b>ԲՅՈՒԶԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	<b>4388.3</b>	<b>4388,3</b>	<b>4512,5</b>	<b>4512,5</b>	<b>4512,5</b>	<b>4512,5</b>	<b>4512,5</b>
I.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
1.1	<b>Գույքային հարկեր անշարժ գույքից</b>	<b>2.6</b>	<b>2,6</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>5</b>
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	0.0	0,0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Հողի հարկ	415.6	415,6	440,0	440,0	440,0	440,0	440,0
1.2	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	90.6	90,6	98,0	98,0	98,0	98,0	98,0
1.3	<b>Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	<b>0.0</b>	<b>0,0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
	Տեղական տուրքեր	0,0	0,0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Պետական տուրքեր	0,0	0,0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
2.1	<b>Պետական դոտացիա</b>	<b>3750.0</b>	<b>3750.0</b>	<b>3709,5</b>	<b>3709,5</b>	<b>3709,5</b>	<b>3709,5</b>	<b>3709,5</b>
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.2	<b>Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>0.0</b>	<b>0,0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0.0	0,0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.	<b>ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
3.1	<b>Տոկոսներ</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
3.2	<b>Շահաբաժիններ</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
3.3	<b>Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ</b>	<b>220.0</b>	<b>220.0</b>	<b>260,0</b>	<b>260,0</b>	<b>260,0</b>	<b>260,0</b>	<b>260,0</b>

2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծեկամուտներ չի կարողանում

ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում: Արևուտ համայնքը գտնվում է նախալեռնային շրջանում, ձմեռը երկարատև է, որը խոչընդոտ է հանդիսանում անասնապահության համար:

Համայնքի գյուղատնտեսությանը մեծ վնասներ են հասցնում կարկուտը, սակավաջրությունը և անձրևային քիչ տեղումները:

Համայնքի բյուջեի սեփական եկամտները բավականին քիչ են, այդ իսկ պատճառով համայնքում հնարավոր չէ իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը:

## **2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը շրջկենտրոն Թալին,
- Համայնքում օրսիդանի հանքավայրը,
- Համայնքում կա ավազային պեռլիտի հանքավայր
- Բնակավայրին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
- Համայնքում կա կարմիր տուֆ քարի հանք,
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Անասնապահության համար բարենպաստ պայմաններ:

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

- Գյուղապետարանի շենքի և համայնքային կենտրոնի բացակայությունը
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը
- Մշակույթի տան անբարեկարգ վիճակը
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը

- Համայնքի գյուղապետարանի, գրադարանի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքում աղբահանության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը
- Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- արոտավայրերի պակաս լինելը և վարելահողերի չմշակելը
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Համայնքի գերեզմանատան չցանկապատված լինելը

### ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի վարչական տարածքում օբսիդիանի հանքերի առկայությունը զգալիորեն նպաստում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը:
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Համայնքային կենտրոնի շենքի կառուցման դեպքում հնարավորություն կստեղծվի՝ համայնքի գյուղապետարանին և գրադարանին ազատելու մշակույթի տան շենքում դրանց կողմից զբաղեցրած տարածքները և տեղափոխվելու նոր շենք՝ ավելի ընդարձակ և հարմարավետ պայմաններով,
- Համայնքի մանկապարտեզի շենքի կառուցում
- Համայնքում մսամթերքի վերամշակման պայմանների ստեղծում

### ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊՈՐՏԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՏԱՆՁՆԵՐԸ



3. Խմելու ջրի ջրամատակարարման մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
4. Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
5. Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
6. Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
7. Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը ութամյա դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը
8. Գյումրի-Արմավիր ճանապարհի Թալին-Արտենի անսարք հատվածը խոչնդոտ է հանդիսանում գյուղմթերքի տեղափոխմանը և իրացմանը:

## 9. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 9.1. Համայնքի զարգացման տեսլական

#### Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և զործարկում,
- Համայնքում անասնապահական մթերքների վերամշակման ցեխի կառուցում,

- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով,
- Օբսիդիանի հանքաքարի վերամշակման ցեխերի կառուցում

Համայնքի զարգացման 2017-21թթ. քառամյա ծրագրի **հիմնական նպատակներն են՝**

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ միջնակարգ դպրոցի շենքի նորոգման, ներքի հարդարման, դռների և պատուհանների փոխարինման և ջեռուցման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (գյուղապետարան, գրադարան,) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով:
- Համայնքում բուժկետի կառուցում

- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը առաջիկա հինգ տարիների համարարտահայտված տոկոսներով

Հ/հ	Մուտքերի հանվանումը	2016թ. փաստ.	2017թ. %	2018թ. %	2019թ. %	2020թ. %	2021թ. %	Ընդամենը աճ
1	2	3	4	5	6	7	8	9
1	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	2.6	0,0%	0,0%	0,0%	10,0%	10,0%	10,0%
			0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
2	Հողի հարկ	415.6	10,0%	10,0%	10,0%	10,0%	10,0%	10,0%
			440.0	440.0	440.0	440.0	440.0	440.0
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	98.0	43,0%	43,0%	43,0%	44,0%	44,0%	44,0%
			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	00,0	0,0%	10,0%	20,0%	20,0%	25,0%	25,0%
			0.0	1.0	2.0	2.0	2.5	7.5
6	Հողի վարձակալությունից եկամուտներ	220.0	18,0%	18,0%	18,0%	18,0%	18,0%	18,0%
			0,0	0,0	0,0	0,0	0,0	260,0

- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը արտահայտված տոկոսով:

		Բնակիչների ընդհանուր թիվը 2016թ. փաստացի	Բնակիչների ընդհանուր թիվը 2017թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2018թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2019թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2020թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2021թ. կանխատեսում
1	Ընդամենը	110	110	110	110	110	110
2	Աճը տոկոսներով	0%	2%	2%	2%	2%	8%

- Համայնքում առկա անասնազվխաքանակը և կանխատեսումը առաջիկա հինգ տարիների համար

N	Անվանումը	2016թ. փաստացի	2017թ. կանխատ.	2018թ. կանխատ.	2019թ. կանխատ.	2020թ. կանխատ.	2021թ. կանխատ.
1	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	490	490	500	500	500	500
2	Ոչխարների և այծերի գլխաքանակը	700	750	750	750	750	750
3	Հավերի և այլթռչունների գլխաքանակը	800	1000	1000	1000	1000	1000

## 9.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

### 1. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

1. Ներհամայնքային փողոցները հողային են , խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017թ. ընթացքում:

### 2. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի կառուցում

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-21թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- համայնքային նոր կենտրոնի կառուցում և ջեռուցում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի նոր տարածք տեղափոխել համայնքի գյուղապետարանը և գրադարանը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ հիմնարկների գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- համայնքի ութամյա դպրոցի շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների և պատուհանների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը և ավելացնելով դպրոցում սովորողների թիվը,
- համայնքի գազաֆիկացում, գազամատակարարման ներհամայնքային համակարգի ստեղծում և շահագործում՝ եռակողմ համագործակցության հրավիրելով և ներգրավելով նաև <Ռուսգազարդ - Հայաստան> ՓԲԸ-անը,

- Թալին-Արմավիր մայրուղուց մինչև համայնք ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն,
- մարզկենտրոն Աշտարակ, Երևան քաղաքի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների,
- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում՝ պետական պատվերի շրջանակներում,
- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում
- 2015-17թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում՝ նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝
- աղբավայրի կառուցում և շահագործում,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում,
- Թալին, Աշտարակ-Երևան և մյուս բնակավայրերի միջև շուրջօրյա հասարակական տրանսպորտի ապահովում և շահագործում,
- այլ ծրագրեր և ծառայություններ:

2017-21թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել համայնքի սերտ համագործակցությունը <Վորլդ Վիժն - Հայաստան> կազմակերպության Թալինի տարածաշրջանային գրասենյակի հետ՝ դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
			2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետություն, այլ
1.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	250.0	250.0						250,0	
2.	Ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	3500,0		3500,0					3500,0	
3.	Համայնք տանող ճանապարհի /3.5 կմ / ասֆալտապատում	30000,0			30000,0				300000.0	
4.	Համայնքի գազաֆիկացման աշխ. շարունակություն	18000.0			18000,0				18000.0	
5.	Համայնքի նոր սպանդանոց	15000,0	15000,0						15000,0	
	<b>Ընդամենը</b>	<b>66750,0</b>	<b>15250,0</b>		<b>480000,0</b>				<b>66750,0</b>	

#### 4 ՀՀԶԾ ֆինանսավորում / հազար դրամ/

**1-ին ծրագրի**(Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում) իրականացման համար 2017 թվականի Դոնոր կազմակերպությունների կողմից նախատեսել 250.0 դրամ :

**2-րդ ծրագրի** (Ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ընդհանուր արժեքը 3500,0 հազար դրամ) իրականացման համար 2018 թվականի Դոնոր կազմակերպությունների կողմից նախատեսել 3500.0 դրամ ::

**3-րդ ծրագրի** (Համայնք տանող ճանապարհի ասֆալտապատման, ընդհանուր արժեքը 300000,0 դրամ) իրականացման համար 2019 թվականին դիմել ՀՀ Դոնոր կազմակերպությունների կողմից անհրաժեշտ միջոցներ հատկացնել ծրագիրը 1 փուլով իրականացնելու համար:

**4-րդ ծրագրի** (Համայնքի գազաֆիկացում, ընդհանուր արժեքը 18000,0 հազար դրամ) իրականացման համար 2019 թվականի Դոնոր կազմակերպությունների կողմից :

**5-րդ ծրագրի**(Համայնքում սպանդանոց կառուցելու ընդհանուր արժեքը 15000.0 դրամ) իրականացման համար 2017թվականի Դոնոր կազմակերպությունների կողմից:

## 1. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը) ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ: ՀՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային և բնակավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների: ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

**Ծ Ր Ա Չ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Չ Ի Ր /1/**

**«Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում»**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Համայնքի հասարակական տրանսպորտ աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում 2. Համայնքի բնակիչների խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում							
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային Արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		250.0	0	0	0	0	0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)				
			2016	2017	2018	2019	2020	2021
			250.0	0	0	0	0	0
	2.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
			0	0	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> <li>• ճանապարհների հարթեցում</li> <li>• ճանապարհին առկա փոսերի վերացում</li> <li>• փողոցների կանաչապատում</li> </ul>							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 50.0 Կապիտալ ծախսեր՝ 250.0 Ընդհանուր բյուջեն՝ 250.0							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Հող, ավագ, խեճ,							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անձրևների ժամանակ նոր փոսերի առաջացում							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ							
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.02.2017-01.10.2017							
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Ներհամայնքային ճանապարհներին առկա փոսերի վերացում 2. Փողոցների բարեկարգում							



## Ծ Ր Ա Չ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Չ Ի Ր /2/

### «Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի շարունակություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1.Բերքահավաքի ժամանակ համայնքի բնակիչների գիշերային ժամերին աշխատանքների կատարմանը նթացքում առկա խոչընդոտների վերացում 2.Համայնքի գյուղատնտեսական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	3500.0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	3500.0	0	0	0
	4.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	0	3500.0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> <li>• Նոր ցանցի կառուցման շարունակություն հիմնական փողոցներում</li> <li>• նոր ցանցի կառուցում երկրորդային փողոցներում</li> </ul>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500.0 Կապիտալ ծախսեր՝ 3000.0 Ընդհանուր բյուջեն՝ 35000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Էլ. Հաղորդալարեր, էլ. սյուներ, լամպեր						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, զբոսաշրջիկներ, համայնքնապետարան						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2018-01.10.2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Փողոցների և ներհամայնքային ճանապարհների գիշերային լուսավորության ապահովում						

**Ծ Ր Ա Չ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Չ Ի Ր /3/**

**«Համայնք տանող 3.5 կմ ճանապարհիի ասֆալտապատում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում 2. Սեքենաների անխափան շահագործում 3. Դեպի շուկա անարգելք տեղաշարժ 4. Որակյալ կապ այլ բնակավայրերի հետ						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	30000.0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	200000.0	200000.0	30000.0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <input type="checkbox"/> ճանապարհի հարթեցում <input type="checkbox"/> գրունտային ծածկույթի ստեղծում, ամրացում <input type="checkbox"/> ասֆալտապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 800.0 Կապիտալ ծախսեր՝ 22000.0 Ընդհանուր բյուջեն՝ 30000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Աշխատանքների ժամանակին և անընդհատ կատարման համար անհրաժեշտ գումարի առկայությունը:						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, մթերողներ, արտահանողներ, զբոսաշրջիկներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2017-30.08.2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախագծա-նախահաշվային աշխատանքների իրականացում: Ճանապարհի հարթեցում, ամրացում, գրունտային ծածկույթի ստեղծում, ասֆալտապատում:						

## Ծ Ր Ա Չ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Չ Ի Ր /4/

### «Համայնքի գազաֆիկացում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն 2. Գյուղատնտեսության խթանում, ծախսերի խնայողություն								
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ						
		2016	2017	2018	2019	2020	2021		
		0	.0	0	18000,0	0	0		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
				2016	2017	2018	2019	2020	2021
				0	0	0	18000,0	20000	15000
	2.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
				2016	2017	2018	2019	2020	2021
				0	0	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ Համայնքում գազամատակարարման համակարգի կառուցման շարունակություն								
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 6000.0 Կապիտալ ծախսեր՝ 12000.0 Ընդհանուր բյուջեն՝ 18000.0								
Ծրագրի հրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Գազ մատակարարող կազմակերպություն և բնակչության աջակցություն								
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անվճարունակ բնակիչներ								
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ								
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2027-01.10.2017								
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի գազաֆիկացման համակարգի շարունակություն, որով կապահովվի համայնքի մնացած 40 % բնակչությանը գազամատակարարումը և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, բարեկեցության մակարդակի բարձրացմանը ավելի քան 30 տոկոսով, զգալի խնայողություններով:								

## Ծ Ր Ա Չ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Չ Ի Ր /5/

### «Համայնքի նոր Մպանդանոցի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1.Բնակիչներին խմելու ջրով ապահովելը, ներքին ցանցի կառուցումով 2.Ղպրոցի նորակառույց շենքի ջրամատակարարում 3.Չմեռային ամիսներին ջրի սակավության նվազեցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	15000.0	0	0	0	2500
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	5.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	15000.0	0	0	0	2500
	6.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ul style="list-style-type: none"> <li>• Նոր ջրագծի կառուցում</li> <li>• Համայնքը դարձնել 100% ջրով ապահովված համայնք</li> </ul>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3000.0 Կապիտալ ծախսեր՝ 12000.0 Ընդհանուր բյուջեն՝ 15000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ակունք						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկերը բացակայում են:						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, աշակերտներ, դպրոցի աշխատակազմ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2017-31.10.2017						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ամբողջ համայնքում ջրամատակարարման ապահովում, դպրոցի շենքի ջրամատակարարում, ջեռուցման համակարգի շահագործում:						